

ամենքն այլ ընդունին՝ որ Յուգա և Այման՝  
յարեւելու քարոզած են, իսկ Հայք՝ ինչպէս  
առաջնոյն հանգըստեան տեղը ցուցնեն,  
նոյնպէս Երկրորդին համար այլ կ'աւանդեն՝  
որ նահատակուած և թաղուած է ի Ռուս-  
դաւա կամ Ռուսուդա քաղաքի՝ « ի Թիկանց  
« Որմեայ » . — ո՞ր Կողմէն նայելով Որմեայ  
արեւելեան կողմի չի յարմարի, զի մօտ է  
իր ժամին, այլ թուի յարեւմտակողմն կամ ի  
հարաւ : — Կանանցաւոյն յիշատակն ի Յայսմ-  
տաւրս դրուի ի 17 ապրիլի . իսկ Լատինք  
թէ ասոր և թէ Յուգայի յիշատակը՝ զնեն  
ի 28 հոկտեմբերի :

Ցիշուի դարձեալ, Յուգա անուամբ և Հայ-  
քին կամ Շահինու, Շապիու, մականուամբ՝  
Հայոց աւետարանիշ մ'այլ՝ ի Յայսմտաւրս  
ոմանն և Միիսայէլ պատրիարք ժամանակա-  
զրէն . Նահատակութեան տեղն այլ՝ Խորար,  
ժանօթ և մեծ քաղաքն, Վանայ ծովուն ա-  
րեւմտեան հիւսիսային եղերքը . յիշօթանա-  
նից աշակերտաց Քրիստոսի համարին զա-  
յիշողն . բայց օտար ազգաց ժանօթ չէ . ա-  
նունն կըրնայ շփոթել տուած ըլլալ, բայց  
նահատակութեան տեղն որոշուելով միւս  
Յուգայէ և Թագէն, ոչ է անհաւան՝ թէ որ  
և է անուամբ մէկն վերյիշելոց ատեն կամ  
քիչ վերը՝ եկած և քարոզած ըլլայ այդ նշա-  
նաւր քաղաքին կողմերը :

Արդ, Հայք՝ ինչպէս տեսանք, իրենց եկե-  
զեցոյ չորս առաջին հիմունք ճանշնան զթա-  
գեսու, Բարբրոդիմեռու, եսանունն Յուգա, (որ  
և Սրբի կղեկովայ կոչուի) և Այմեռն կանա-  
նացի . երեքն Ալաքեալք, միւսն հաւատարեալ  
և առաջնութեամբն նախադար . Սոյը և Բար-  
թողիմեայ գովաստն գանձասացն ( Խաչա-  
տուր ) երգին վերջին տան մէջ՝ առ Տիրամալըն  
ակնարկելով՝ յիշէ զատուք, իրեն բարեխօսա-  
կից ընդունիլ՝ ի պահպանութիւն Հայոց .

« Արբայուէի՛ Դիշոյոյ անքութեամբ,  
Հանճարապանչ Հոգուոյն մաքրութեամբ,  
Ներշահօւնակ անրած միւսութեամբ .  
Ծնն քեզ առցես միջնորդ հալտութեան  
Էզթագէռս պատուեալ Գեղարդեամբ,  
Զիարթողիմէռս զարմն ստուգութեամբ,  
Յուգա եղրայր Մեծին Յակորայ,  
և Հմաւան՝ որ Բարի-նախանձ .

Հաղորդեալ վերին պարզեւաց .  
Ըստ չորս գետոց և չորս աթոռոց,  
Նոյն և տարերց և չորից ծագաց,  
Արքօք մազթեա զիրդին քա գըթած,  
Խնամել զագզոց Հայաստանեայց .  
Պահել զաթոռ սոցա պարագայց  
Ի յաւիտեանս ժամանակաց » :

Ուրիշ քերդող մ'այլ ( Ստեփանոս ) յ'Ժէ  
դարու, Համառոս կըսէ .

« Այս չորիգումք վիմօք հաստին  
« Ենիուածք մերոյ սուրբ հաւատաքին » :  
Հ. Դ. Վ. Մ. Ա. Ա. Ա. Ա.

Եարայարելի



## Ս. ՀԻ ՊՊՈԼԻՏԻ ՏՈՍ

ԵՒ ԻՒՐ ԳՐՈՒԱԵՐ ՀԱՅ ՄԱՅԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ ՄԵԶ

( Շար. տես յէջ 10 )

**Ֆ**Ա.Տ մատենագիրք գոված են Հիպ-  
պոլիտեայ հմութենը և խօսած իր վրայ :  
« Զես զիւեր, կ'ըսէ Սուրբ Հերոնիմոս, քէ  
իշր գրոց մէջ ինչ բանի վրայ աւելի զար-  
մանաս, արտօքին հմուտքեմն քէ Առառա-  
ծաշնի գիւտորեան ». և Փոտ, « Քաջ մէկիէլ-  
Գրոց, հմուտ ինչ կարգաց ». սակայն խոչ  
արձագանց մը միայն մացած է հին հարց  
զավասանըն, որովհետեւ Հիպոլիտինայ բազ-  
մաթիւ գրուածներէն քիչեր հասած են մեզ  
և անսնը ալ սոսկ պատառիկներ՝ Նորերու  
մէջ անոր գործերով զրաղողներէն աւելի յի-  
շատակուելու արժանի են Փապրիկիսու, Տէօ-

1. Եւսեբիոս հետեւեալները կը յիշէ . « Յա-  
մենայն գրութեանց նորա սուքա են որ առ մեզ  
հասին . վասն Վեցօրեայ արարածոց, ընդդէմ  
Մարիկինացւոց, յիրգէ Երգոցն, վասն քանի  
մի գիւղոց գրոցն նշեկէլլ, վասն Զատիկի, Ընդ-  
դէմ ամենայն հերձաւեծոց . իցեն նորա այլ  
եւս երկասիրութենք առ ոմանն պահեալք » .  
(Պամ. Եկ. Դաշ. Զ. Գլ. ԽԲ )

լինկեր, Հէրկէնրօթէր, Տը Լակարտ, Մէսին-կէր որոնց ասորի, յոյն և լատին լեզուներով հրատարակեցին Հիպաղլիտեայ գրքերը, կամ անոնց վաւերականութեան վրայ վիճեցին<sup>2</sup>. մենք սոսկ անոնց անուններն յիշերով պիտի անցնինք, ուզելով հայերէն հատուածոց վրայ խօսիք:

Մէկնութիւնը. — Հիպաղլիտոս առաջիններէն է Հին կտակարանի վրայ մանրանան մեկնութիւն զրոյաց մէջ, և բուն մեկնութիւն ալ կարելի չէ բաել, վասն զի բնագիրը բառ առ բառ չի լուծեր, այլ կը գոհանայ ընդհանուր իմաստուն մէջ թափանցել. Եթրակի իրմէ վերջ Որոգինս գերազանցեց զինը հանձարով և հմառութեամբ, սակայն մեկնական օրինաց ճշգրտեան մէջ պսակը Հիպաղլիտոսի է: Սուրբ Գրոց վրայ ձեռնարկած մեծամեծ աշխատութիւններէն միայն պատառիններ ունինք Վեցօրինց, Մննդոց, Եղից, Սաղմասաց, Առաջաց, Ժողովոյի, Երդ Երդոցի, Խսայեաց, Եզեկիլի, Դամիլի, Եռաշանայ պատուուրեան և Երից մանկանց Օրհնութեան: Նոր կտակարանի մէջին աւելի վրայած է Յովինանոց Աշետարանով և անոր Յայտնութեամբ:

Ճառող. — ի Յայտնութիւնն (տասն զիսով): Արեւելեան Եկեղեցւոյ սովորութիւնն էր Գոարու մէջ, մեացնել Յիսուսի ծննդեան, Մկրտութեան և մնացուց երկրպագութեան կամ Յայտնութեան տօնիրը. սակայն ճառուս զիխաւոր նիւթն է Մկրտութեան խորհուրդը: — Կ'ըսուիթ թէ Որոգինսի վիմաց, որ այն ատեն ի Հոովմ՝ կը զոհուէր, խօսած ըլլայ ճառ մը ի գոլիստ Աստուածային Փրկչին: — Յորդուր առ Մէկնութիւնը:

1. Fabricius, S. Hipp. opera Graece Latine, Hamburgi 1716. — Döellinger, Hipp. et Call. Ratisb. 1853. — Hergenröther, Hipp. et Novat. Revue autr. de théol. cath. 1863. Lagarde, Hippolyti Rom. quæ feruntur omnia græce. Lipsiae 1858. — Mössinger, Monumenta syriaca Հա. II. էջ 9-32. — Արքերէն հատակառով մը հրատարակեց E. Bratke, Zeitschr. f. wissenschaftl. Theol. 1893, p. 282-9.

2. Paul Allard հմտալից և հնախօսական

Տէօլինկէրի, ուզզուած պէտք է ըլլայ առ Յովիա Ակուելա Սեւերա՝ երկրորդ կին Հէլլովարալ կայսեր. կամ ըստ Rohrbacherի Փիլապոսի կին, որով կը հաստատուի հենրէն սոմանց կարծիքը Փիլապոս կայսեր քրիստոնէութեան մասին: — Թէսպութաս կ'աւանդէ քանի մը անցքեր Հիպաղլիտեայ՝ Եղանակի և Սամուելի մօր Անեայի վրայ գրած ճառին:

Վարդապակուութիւնը եւ Հականառութիւնը. — Այնէն նշանաւորն է Վասն Նեսին կամ Վասն Յայտնութեան Քրիստոսի և Նեսին զիրքը (ԺԵ զլուկ), Թէսպիլոս առուամբ բարեկամներէն միայն նուիրուած: Երկար ատեն զիրքով կորսուած կը համարուէր, թէկտեն հիներէն այլ և այլ խորագիրներով կը յիշատակուէր. սակայն Մարգար Կուսակու Մարտնացին՝ յետոյ նորհրդական Ձանիմարդայի թագաւորին, հանեց զայն Բէյմի գրատունն և հրատարակեց յունարէն 1466 ին. Երկարորէն կը մեկնէ Դասիէլի տեսիլը և Նարուգողոնոսորայ երազը որուն հայերէն Թարգմանութիւնն ունինք և ասոր վրայ պիտի խօսինք ի վերջոյ: — Ընդդեմ աւենայն եկեղեցածոց կամ իմաստասիրականը. այս անանուն գործս տասը զիրք ունի. Ա. զիրքը հրատարակուած էր Որոգինսի առուամբ 1704 ին Գրոնովիսէ. Դ-ժ գրքերը հրատարակուեցան առաջին անգամ Ե. Միլէրի ձեռքով 1854 ին Աթուէ բերուած (1842) ձեռագրի մը վրայն, որուն զրչագիրն կը պահուի Փարիզու արքունական մատենակարանի մէջ: Երկրորդ գրքերն զեռ կը պահին: իմաստասիրականը ընդպարձակ հերքում մ'են ամէն մոլորու-

փաստերով կը զանազանէ քրիստոնէութեան առաջին դարուց մէջ եղած Հիպաղլիտոս առուամբ այլ և այլ անձինքը. կը խօսի մերս Հիպաղլիտոսի մատուրուսութեան, թաղման տեղւոյն, յետոյ կառուցուած մատրան և անոր նորպագրաւ բեկուներուն վրայ, օգտուելով մեծապէս De Rossi Հնագիտքն քննութիւններէն: (Les Derniers Perses. du III.ème siècle, Appendix 324-362).

3.Պամ. Եկ. Հա. Եջ 338:

թեանց, յոյն իմաստասկրաց (Ա), աստեղազգիտաց (Պ), Գնուատիկեանց, Մընատինեանց (Ե-Ը). Նովատիսոսի, Կալլիստոսի և Հրէից (Թ), վերջին վիրբը քաղուած մ'է առաջին ներուն ։ Ընդհանրապէս Արոգնեսի Վընծայուէր վիրբս, այժմ Հիսպոլիտասի կուտան գերմանացի բանասէրը, թէպէս կարեի չէ զեւ եւս որոշել ։ — Ընդյուն Նովատիսի վիրբն այ ժ (վիլով) պատառիկ մ'ըլլալուն է, որովհետեւ շարանակութիւն կը տեսնուի Ընդյուն ամենայն հերձուածոց վրբին. ուղղուած է Նովատիս Զմիւնացոյ, և կը կոսի հայրաշրջար մերորութեան դէմ, հաստատեելիք Որով մարզեղովթեան վարդապետաթիւնը. Ս. Եպիփան գրիմէ ամբողջապէս զրցու առաջնին մասն օգտուած է Նովատանց մերութիւնը հերցիլու համար. — Ընդյուն աղանդոյն Տերունի. այս մատենէս պատառիկներ միայն հասած են, զորս քննազանիներն ուսմանք անվաւեր կը համարին, վասն զի Միխալմայց մելորութեան հերցումը կը պարունակէ. ասկայն Անաստատաքահանայ և գրապետ ի Ա. պոլիս որ մաս մը օրինակից այս զործէն հօթներորդ դարու մէջ, զիհպոլիտոս կանուանէ հեղինակի. — Ընդյուն Պղասոնի. կտոր մը հասած է ոսյոն աշխատութենէն, որ և նշանակուած է իր բազմած գահուն վրայ Զատկական Շըրշանա հետ միասին. կը խօսի միենքրաց ծագման վրայ. — Զատկական Շըրշան. այս անուամբ ձգած է Ա. Հիսպոլիտոս ցուցակ մը որ Զատկի օրն որոշելու կը ծառայէր. Վըսի թէ ամէն տասնուվեց տարին անհամ մը Զատկի նոյն օրը կը հանդիպէր. — Ապացուցութիւն ընդյուն Հրէից (Ժ. գուփ) Սաղմուաց մեխնութենէն քաղուած կը թուի քան

թէ առանձին գիրց մը. — Յաղագս Պարգեւաց. շատեր կը կարծեն որ Հիսպոլիտաւայ արձանին վրայ նշանակուած այս վիրբը, նոյն ըլլայ Առաքելոց Սահմանազրութեան մէջ յիշուածին հետ. և որ մեխնութիւն է Առաքելոց լուսածին (Ա. կոր. ԺԲ):

Իսկ հետեւեալք ամբողջապէս կորուուծ են. Յաղագս Աստուծոյ և Յարուշեան մարմանց. Վասի բարոյ և չարի, որ նոյն կը համարուի Ընդյուն Մարկիոնի գրքին հետ, թէպէտ կան ալ որ այս յետին առանձին զրութիւն կը համարին: Երկրայիլի է Վասի երկուասան Առաքելոց և Յօրանատուն Աշակերտաց առասպելախանն վիրբ:

\* \*

Հիսպոլիտաւայ այսափ գործոց մէջէն « հայկական թարգմանութեան մեկի աւանդածք՝ քանի մը հասուածք եւեթ են, ընտիր ոսով և լիզուով, հինգերորդէն ութիրորդ զարում մէջ եղած փոխադրութիւնը<sup>2</sup> »: Եթէնց մի առ մի Երանելոյն Հիպոլիտայ բռատրացոյ յերզ երգոց մեկնուրենէն. պատարիս տպուած է հայերէն բնագրով և ստորեւ լատին թարգմանութեամբ Փիլորայի Առալետա սարա Spicilegio solesmensi ի Հա. Էջ 232, օմանկալութեամբ Հ. Գ. Վ. Պարբհանականի. Գերմանիներէն թարգմանութիւնն 1897ին հրատարակուեցած Հիսպոլիտոսի ընծայուած հատորոյ մը մէջ<sup>3</sup>, կը սկսի Երգ երգոցի Գ. զուփի և համարէն մինչեւ 6, « ի գիշերի խնդրեցի զոր միերեաց ամեն իմ... » և ամբողջ նիւթն է, Քրիստոսի յետ յարութեան, կանանց երեւումը. հատուածս կը գտնուի մեր մատենազարանին թ. 512 և 653 ձեւ.

1. Ի Գերմանիա, բողոքական քննադասից մեծամասնութիւնը և ուղարքաւաց սուսարթի. մը Հիսպոլիտաւայ Վընծայէն Philosophus-mensa վրբին հեղինակութիւնը: Տես իրենց անուանքը De Smedt, Dissert. in prim. act. hist. eccl. էջ 83-91, և Jungmann, Diss. selectio hist. eccl., Ratisbonne, 1880, Հա. Ա. էջ 224: Իսկ այս կարծեաց դէմ կուռող փառտերը. տես De Rossi, Bullet. di arch. crist.,

1866, էջ 97. 1881, էջ 32, և Jungmannի Վընծայէն գործ, էջ 239: Pierre Batifol ի Ֆիլիպ այլոց կը յիշէ Krügerի փառտերը Հիսպոլիտոսի բռատառիկանաց հեղինակ ըլլալուն, և զրել սպացույցներով Վընծայէնայ անունը: La Litter. Grecque, 1898, էջ 156-157:

2. Վատ. Հայկ. Թրգմ. էջ 554:

3. Die Griechischen Christlichen Schriftsteller - Hippolytus. Ա. Հա. Ա. մաս էջ 630:

ուագրաց մէջ, և այս վերջնոյս գրեթէ ամբողջ մէկ ու կես խոշոր էջերն բռնած է: — Մի-  
ծագոյն հատուած մ'է Երգ երգոց (Ա. զ. 4-Ե. զ. 1) մեկնութեն նոյն Հիպաղլիսոսի  
անուամբ Պեղինու կայսերական գրատան մէջ  
գտնուածը (թ. 89. — ցանկ Քարամիանցի  
Տ. 72. (B) Bl. 155<sup>o</sup>) որոյ միայն հայե-  
րէնը կայ, Գերմանիերէն թարգմանած է Գէորգ  
Պապայիանց Գեղզերի առաջարկելով, և հրա-  
տարակուած վերոյիշեալ Հիպաղլիսոսի նուի-  
րուած նոր հրատարակութեան մէջ (չ 359):  
Կը սկսի «Սեա եմ ես և գեղեցիկ, դրս-  
տերք Երուսաղէմի. իրեւ զվաճն Կեդա-  
րու և իրեւ զիորանն Սողոմոնի»: Ի ձեռա-  
գրին՝ սասր անմիջապէս կը յաջորդէ Ներսիսի  
Տարասոնցոյ Երգ երգոցի մեկնութիւնը<sup>1</sup>:  
Զգիտեմբ ի՞նչ պատճառաւ մինչեւ 17 հա-  
մար կը նշանակէ գերմանիերէն հրատարա-  
կութիւնը, մինչ Հիպաղլիսեայ մեկնութիւնը  
և մեր հայերէն Աստուածաշունչը մինչեւ 16  
ունին: Կանխաւ արդէն ըսինց<sup>2</sup> թէ Յօ-  
վուատչ անվաւեր կը համարի հատուած,  
Փիլոն կարպասիոսի և կիւրլի Աղեքսան-  
դրացոյ քով նման անցքեր գտած ըլլալով.  
սակայն ինչպէս ի վերջոյ կը յաւելու, որոշ  
ապացոյց մը կարելի չէ հանել:

Հազարու յարութեան ճառը եթէ հարա-  
զատ համարիմբ Հիպաղլիսեայ, վասն զի  
հատուածիս յունարէնը կը գտնուի Սուլք  
Ռոկերեանի անհարազատ գրուածոց մէջ,  
և անստոյզ է երկուքէն որոն վերաբերիլը,  
Յովհաննու աւետարանի մեկնութեան մէջ  
պէտք եմը զնել, ինչպէս որ հատուածիս  
խորագիրն կը յայտնէ. «Երամելոյն Հիպա-  
ղլիսիայ Բուստրացոյ ի մեկնութենք աւե-  
տարանին որ բուտ Յովհաննու, ի յարու-  
թիւնն Ղազարու. «Որոյ աշրինակ մայր որ-  
դեսէր տայ զստինն ցմանունի»: Հրատա-  
րակուած է և սա մերոյիշելոյն հետ Փիլորայի  
նոյն հատորին մէջ, որոյ վրայէն թարգմա-  
նած է գերմանիերէն D. August Burckhardt

Պաղլիւայի մէջ: Սակայն այս պատասխիս  
համառապութիւն է հետեւեալին որ կը սկսի  
«Եր ուն հիւանդացեալ Ղազարու անոն ի  
Բերամիա», ծայրէն ցանի մը տող թերի. որ  
կը պարունակէ գարձեալ թարգմանու-  
թեանց Մատենագարանի մէջ յիշուած (չ 555) Ա. «Ձի ամենեւշին իսկ ցոյցէ ձշմար-  
տապս մարդ գորով սակս արտասուելոյն»:  
և Բ. «Հրամացեաց նոցին իսկ Հրէկիցն ձե-  
ռաց ի բաց բաշտեցանել զվեմն»: հա-  
տուածներն, զսրո հրատարակած և Paulinus Martinus, առնելով Փարիզեան գրա-  
դարանին<sup>3</sup>: Արով կարելի է ըսել թէ Կրիստո-  
օրինակը կան ճամփու, մին համառու, ինչ-  
պէս Փիլորայի տպածը, և միւսը երկար՝ Փա-  
րիզեանը, որուն վրայէն լրացուցած է Մար-  
թին առաջնոյն պահանները. առ մեզ երկ-  
րորդն ալ կը գտնուի թ. 42 գրչազիր մէջ:  
Յակովրայ և Մովսիսի օրինուորիւթեացը  
Եննոցը մեկնութեան անշուշտ պէտք է վե-  
րաբերին: Վարզան վարդապետ կը յիշէ որ  
ի Հիպաղլիսեայ և յիշիրեմէ հաւարեց զիւր  
մեկնութիւնն ի վերայ Հնդամանանին<sup>4</sup>: Խո-  
րագիրներն նու Հիպաղլիսեայ յաշրինուորիւթեան  
Յակովրայ որ վերկուասան նահապեսուն  
աւրինեաց. «Վասն աշրինուորեացն Յակո-  
վայ առնելով բանս...» ի ձեռագրին (թ.  
352) 308—338 էջերը, որուն անմիջապէս  
կը յաջորդէ 338—364 նոյն հեղինակն  
Մեկնուորիւնն աշրինուորեացն Մովսեսոյ  
յերկուասան ազգս. «Զերանեկոյն խամակայ  
զեկեա աշրինուորիւնն առ որդիսն իշր...»:  
Մարթին հրատարակելով հետեւեալ հա-  
տուածը<sup>5</sup>, Հիպաղլիսու(յ) ասացեալ. «Վասն  
երկ անման և մանկանացու արար Աստուած  
զմարդն», կը զնէ վրան ի Վաղենսփանո-  
սեանս, որ Հիպաղլիսոսի գործոց մէջ ա-  
պանձնին չի յիշուիր, այլ մաս մ'է ընդդէմ ա-  
մենայն հերձուածոց գրքին. սուրբ Եպիփան  
ալ կ'ըսէ թէ Հիպաղլիսոս Վաղենսփանեանց  
մոլորութիւնը զարմանալի կերպով կը հերթէ<sup>6</sup>.

4. Մատ. Հայկ. Բրդմ. էջ 336:

5. Anelecta, էջ 68—70:

6. Հանդէս Ամաօրեայի մէջ (1896) եղնկայ  
Կողացոյց աշբերաց առթիւ խօսուած է նաեւ

1. Անդ, էջ 374:

2. Բազմ. էջ 10:

3. Analecta sacra, Patres antenicenses. էջ  
64—68:

Հիպաղիտեայ՝ Դանիէլի մեկնութենէն ծահօթ հատուած մը չերեխիր առ մեզ իսկ հետեւեան, Ծնիկ Դանիէլի մարգարի և մեկնութիւն երանելոյն Հիպաղիտեայ Բուտրացոյ Վասն գալուեան ներին եւ կատարածի աշխարհի. «Ես սկս գազան չորրոդի». (Դան. ყլ. է. 7) մեծ նմանութիւն ունի Վասն ներին զրութեանը. հատուած տպուած է առ Փիլրայի (Էջ 236—239), առ մեզ ձեռագիր թ. 742:

Երանելոյն Հիպաղիտեայ եպիսկոպոսի և վիշայի. վասն կատարածի աշխարհի և վասն ներին, և յերկրորդ գալուստ Ծեան մերոյ Յիսուսի Քրիստոսի. այս խորագործ Հատուածներ կը յիշուին. «Քանզի երանելի մարգարիք ալք մեր եղեն» թ. 512 և 514. «Ես արդ լուսարոք երասրը». թ. 456. և «Քանզի Տնասն Յիսուսի Քրիստոսի գալուստն յերկրի. թ. 986. և երեքն ալ նոյն են, յետինս միւսներուն կէսն կը սկսի. Փիլրա փորբ մաս մը տպած է, առաջին Հատուածին սկզբնաւորութեամբ»:

Հուսկ, թէպէս ընզէմ Նովատիոսի և ընզէմ Բերոնի զրոց մէջ<sup>3</sup> շատ անզամ խնդիր կ'ըլլայ երկուց բնուրեանց և լորրորդորեան վրայ, սակայն անհարազատ կը համարուին ե են՝ ի զրչազիր իրեն ընճայուած պատարիկներն, «Հատ անսեաց յիշառակի իննամենայ ծեւալ Ծերե մեր». «Զմարդն առանց Աստուծոյ Բանին խոստվանել».

Հիպաղիտեայ այս գրքին վրայ, և հայ ձեռարձիք համար (թ. 46) կ'ըսէ գրեալ յամի Տեռան 1307 ի Կաֆա. և կը յաւելու, թէ Հիւպաղիտեայ ծանօթ գործերուն մէջ այս հատուածն չենք գտներ:

4. Կը յիշուի Հայ. Ձեռգրց. ցուցակի մէջ (665). Սկիզբ լուսանցքի վրայ բուրգակի մէջ (Դ) կը նշանակուի. ուստի իրմէ յառաջ երեք ուրիշ գործեր ալ Կային նախնաբարութիւն մեր այս ճառան հին-բուլղարական թարգմանթիւն մ'ալ կայ թիւ գործէն:

2. Migne, Patr. gr. X. 803—854:

3. 1896, էջ 49, 60. :

4. 1896:

5. Մատեն. Հայկ. թրդմ. Էջ 503:

«Եռել արարած է և ոչ չարչարի». — «Իսկ որ երկու բնուրժիւն ասեն». — որոց իւրաքանչիւրը երեք կամ չորս տող է, հրատարակուած Փարիզեան զրչազիր (թ. 85) վրայէն, ի Մարմենէ (Էջ 70—71). Արարատամանագրոյ մէջ<sup>4</sup> կը յիշուին Հիպաղիտեայ ընճայուած քանի մը հայերէն պատարիկներ, հանուած ի քաջուածոց, և ըստ մատացուուածագրին, մաս մը կը համարուին ընդուզմէն ներին կամ այլ որ և է զրի. Հիպոդիտեայ (յ) Բոստրաց(յ), «Զի միուրիւն Մրրոյ Երրորդուրժեանն...» — Այլուստ. «Հատ ներին օրինակի, բւկուն և յԱստուծոյ են Արդի և Հոգի...»: — Նորին, «Ոչ վասն անձին իմ մայանց գատուածուրժեանն ասէր...» — Նորին ի նոյն. «Զի Հայր Աստուծ կատարեան են...»: Հանդէս ամսորեայ այս հատուածներու և զարու թարգմանութիւն կը համարի<sup>5</sup>:

Մեր Մատենագարանին ճառընտիր մ'ալ (իթ) Հիպաղիտեայ Բոստրացոյ կ'ընճայէ Ախմիթատրոսի Բոստրացոյ ի Մբնանն Քրիստոսի մէկ ճառը<sup>6</sup>. «Պարտապանուրեանս իմայ գիր, բազաւորական գիր, որ այսօր քարոզեցաց ժողովրդեան, ոչ սիրելիք»:

Այ մասն ասանց են Հիպաղիտեայ զործոց հայերէն հատուածներն . հաւանական կը թուի թէ գտնուին ուրիշ կտորներ ալ, մասնաւոնց իր մեխնութիւններէն. զուց նաեւ ըլլան հատուածներ որ ուրիշ անուան տակ ծածկուած են կամ խառնուած այլոց ճառերուն մէջ, ինչպէս որ բնդհակառակն Հիպաղիտեայ գործերն այլ և այլ մասերու բաժնուած տեսանք:

Հ. Ք. ԶՐԱՔԵԱՆ

 **ԱՄԱԿԱՐԳՈՒԹԻՒՆ**  
իսկական, կամ կարգաւորութիւն հասարակաց աղօթից հայաստանաց եկեղեցւոյ. արարեալ սրբյան Սահակայ եւ Մեսրոպայ վարդապետից եւ Գիւտայ եւ Յովինանու մանդակունցուց եւ այլոց վարդապետուց:

 Գինն է 10 ֆլ.